Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության 2020 թվականի կարիքների համար անհրաժեշտ ծրագրային ցանցի («MULBERRY» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«05» «Նոյեմբեր» 2019թ. ժամը 18:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Ա. Մուրադյան, Ք. Գյուրջյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ 23.10.19թ. հրապարակվել է հրավեր armeps.am համակարգում: 24.10.19թ. փոփոխված հրավերը հրապարակվել է armeps.am համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 31-ի, ժամը 16:00-ին:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Մասնակցի անվանում	**Կազմակերպության էլ. հասցե**	**Կազմակերպության ՀՎՀՀ**
«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ	*info@vxsoft.com*	02617951

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Բանակցությունների վարման մասին

(Մ. Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի I-ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները (գնման ընթացակարգը իրականացվել է ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքերով) մասնակիցը հրավիրվել է բանակցությունների (ոչ ավտոմատ ծանուցում՝ armeps համակարգի միջոցով): Բանակցությունների օրը՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ին ժամը 10:37-ին մասնակիցը հրավերում նշված էլեկտրոնային փոստին ուղարկել է գրություն առ այն, որ նոր գնային առաջարկ չի ներկայացնելու (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Մ.Մխիթարյան)

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկները մինչ բանակցությունները և բանակցություններից հետո մնացել են անփոփոխ և ներկայացվում են ստորև.

Հ/Բ համարը	Չափաբաժնի անվանումը	Կազմակերպության անվանում	Գնային առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին
1	Ծրագրային ցանցի ((«MULBERRY» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի) սպասարկման ծառայություններ	«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ	4,320,000	864,000	5,184000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝

- «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում ՀՀ ՊԵԿ հարցման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ա. Մուրադյան

---------- Ք. Գյուրջյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

24 Դ Բաղրամյան պող.
Երեւան, Հայաստան 0019
+ 374 10 58 59 80
info@vxsoft.com
www.vxsoft.com

ՀՀ Առողջապահության նախարարություն
գնահատող հանձնաժողովի քարտուղար
Հասմիկ Սարգսյանին

Ի պատասխան Ձեր՝
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1 ծածկագրով
գնանշման հարցման հրավերին

Հարգելի տիկին Սարգսյան

Ի պատասխան Ձեր «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 7.7 կետերով սահմանված բանակցությունների հրավերի, տեղեկացնում ենք Ձեզ, որ «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ ընկերությունը նոր գնային առաջարկ չունի:

Հարգանքով,

Վահագն Մխիթարյան
Գործադիր տնօրեն

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ»
"VXSOFT"
02617951